ՀՏԴ:929:7(479.25)Մանուկյան
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-284

# ՍԵՅՐԱՆՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*2024 թ. ապրիլի 17-ին լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ* ***Սեյրանուշ Սոսի Մանուկյանի*** *ծննդյան հոբելյանը:*

*ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրինությունը, գիտական խորհուրդն ու ողջ կոլեկտիվը ջերմորեն շնորհավորում են հոբելյարին լուսավոր հոբելյանի կապակցությամբ, մաղթում արևշատություն, գիտաստեղծագործական նորանոր ձեռքբերումներ և անձնական երջանկություն:*

*Օգտվելով առիթից՝ տիկին Մանուկյանին հրավիրեցինք հարցազրույցի, որը ստորև ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:*

**Աննա Ասատրյան** – Հարգելի տիկին Մանուկյան, քանի որ նշանակալի է Ձեր ներդրումը արվեստագիտության, մասնավորապես՝ հայ կերպարվեստագիտության ասպարեզում, խնդրում եմ պատմեք, թե **ինչպե՞ս եկաք արվեստագիտություն:**

**Սեյրանուշ Մանուկյան** – Ես ծնվել և մեծացել եմ արվեստասեր ընտանիքում: Հայրս եղել է ճարտարապետ, Հայաստանի վաստակավոր շինարար Սոս Մանուկյանը, եղբայրս նույնպես ճարտարապետ էր, քույրս՝ դաշնակահար է: Հետագայում իմ ընտանիքը ևս արվեստի նվիրյալ էր. ամուսինս՝ Իգոր Յավրյանը, փայլուն դաշնակահար էր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնամուրային ֆակուլտետի դեկան: Ջութակահար, միջազգային մրցույթների դափնեկիր է և որդիս՝ Մարտին Յավրյանը: Հանուն արդարության պետք է նշեմ, որ դուստրս (թեև մասնագիտությամբ պատմաբան, դիվանագետ է) նույնպես արվեստի մարդ է:

Փոքրուց տարված եմ եղել կերպարվեստով, դիտում էի նկարիչների ալբոմները, երազում էի դառնալ կերպարվեստի փորձագետ, գիտակ: Եվ պետք է ասեմ, որ ես հիմա ունեմ լիցենզավորված փորձագետի որակավորում:

Սակայն երևանյան որևէ բուհ-ում չկար արվեստաբանության բաժին, այդ մասնագիտությունը ստանալու համար պետք էր գնալ Մոսկվայի պետական համալսարան: Ավա՜ղ, դպրոցն ավարտելուց հետո ծնողներս թույլ չտվեցին մեկնել Մոսկվա, և ես ստիպված մեկ տարի սովորեցի ԵՊՀ ռուսական բանասիրության բաժնում:

Հաջորդ տարի արդեն մեկնեցի Մոսկվա և ընդունվեցի Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժինը: Նշեմ, որ միայն 25 հոգի էին ընդունում այդ բաժին՝ ամբողջ Սովետական Միությունից:

Այն ժամանակ կար օրենք, որի համաձայն մեդալակիրները մասնագիտական քննությունը գերազանց հանձնելով՝ ընդունվում էին առանց մյուս քննությունների: Եվ այդպես, արվեստի պատմության քննությունը գերազանց հանձնելով, ես դարձա Մոսկվայի պետական համալսարանի ուսանող: Ի դեպ, «Արվեստի պատմություն» առարկա դպրոցում չէին դասավանդում, ես այդ առարկան ինքնուրույն էի ուսումնասիրել:

Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում անցկացրած ուսման հինգ տարիներն անցան շատ արագ, լի արվեստով: Մենք ունեինք փայլուն դասախոսներ, ովքեր իրենց բնագավառում առաջինն էին: Նրանց շարքում նշեմ Վ.Ն. Լազարևին՝ համաշխարհային մեծություն բյուզանդագիտության ասպարեզում, նրա աշակերտ Օ.Ս. Պոպովային, ում հետ ես կապվեցի արդեն երկրորդ կուրսից և ում գիտական ղեկավարությամբ գրեցի Տաթևի որմնանկարներին նվիրված իմ դիպլոմային աշխատանքը: Նշեմ նաև Վ.Ն. Գրաշչենկովին, Դ.Վ. Սարաբյանովին, Միխայիլ Իլյինին, Յ.Կ. Զոլոտովին, Վ.Ն. Պրոկոֆևին...

Ուսման տարիներին ամռան ընթացքում համալսարանը մեզ տանում էր ամբողջ Սովետական Միության տարածքում գտնվող մշակութային կենտրոններ՝ հուշարձանները տեղում տեսնելու և ուսումնասիրելու նպատակով: Այդպես ես, չհաշված Մոսկվան և նրա թանգարանները, ճանաչեցի Պետերբուրգն իր Էրմիտաժով և արվարձաններով, Վլադիմիր-Սուզդալը, Նովգորոդ-Պսկովը, Յարոսլավլը, Կոստրոման, Հին Ռուսիայի մայրաքաղաք Կիևն՝ իր արվարձաններով և հիանալի Սուրբ Սոֆիայով, Միջին Ասիայի մահմեդական ճարտարապետությունը, Անդրկովկասի քրիստոնեական արվեստը՝ այդ թվում, իհարկե, մեր հայկական արվեստը...

Կարծում եմ, որ Մոսկվայում ստացած գիտելիքները շատ լավ հիմք էին իմ հետագա գործունեության համար: 1972 թվականի վերջին ավարտելով համալսարանը (հիվանդության պատճառով չկարողացա մասնակցել պաշտպանություններին հունիսին և գերազանց պաշտպանեցի դիպլոմս աշնանը), վերադարձա Երևան և ընդունվեցի Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտ և արդեն 51 տարի է հանդիսանում եմ մեր ինստիտուտի գիտաշխատող: Իմ աշխատանքի ընթացքում ինստիտուտը ղեկավարեցին չորս տնօրեններ: 1997 թվականից համատեղում եմ իմ աշխատանքը ինստիտուտում՝ ԵՊՀ արվեստի պատմության և տեսության ամբիոնում դասավանդման հետ:

**Աննա Ասատրյան** – Նշանակալի է Ձեր գիտական վաստակը հայ կերպարվեստի, մասնավորապես՝ հայկական միջնադարյան մանրանկարչության ուսումնասիրության գործում: Խնդրում եմ ներկայացնեք **Ձեր ներդրումը արվեստագիտության մեջ:**

**Սեյրանուշ Մանուկյան** – Շատ դժվար է որոշել իմ ներդրումը կերպարվեստագիտության մեջ, քանի որ ես ունեմ մի քանի աշխատություն՝ ինձ համար շատ կարևոր, որոնք դեռևս չեն տպագրվել: Հրատարակված աշխատություններիս թիվն անցնում է 120-ից, որոնց մի մասի հետ հնարավոր է ծանոթանալ academia.edu-ում: Մասնակցել եմ նաև մի քանի տասնյակ գիտաժողովների,

որոնցից նշեմ Համաշխարհային Բյուզանդագիտական երեք կոնգրեսները Սոֆիայում, Բելգրադում և Վենետիկում, Փարիզի հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված գիտաժողովը, մեր ինստիտուտի կազմակերպած հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումները, Վրացական արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումները, Մոսկվայի պետական համալսարանի Լազարևյան ընթերցումները, Հայաստան-Ռուսաստան միջազգային սիմպոզիումը, Ռուբեն Դրամբյանին, Ռուբեն Զարյանին, Սիրարփի Տեր-Ներսիսյանին, Լևոն Հախվերդյանին, Բաբկեն Չուգասզյանին, Օլգա Պոպովային, Իննա Մոկրեցովային նվիրված գիտական կոնֆերանսները, Հայ արվեստին նվիրված հանրապետական կոնֆերանսները, Քրիստոնեական Հայաստանի 1700-ամյակին նվիրված կոնֆերանսները, Ռումինա-հայ գիտաժողովը, Մոմիկին, Ներսես Շնորհալուն նվիրված միջազգային գիտաժողովները և շատ ուրիշներ:

Իմ գիտական գործունեությունն ընթացել է երկու ուղղությամբ: Սկզբնական շրջանում բավական ակտիվ զբաղվել եմ հայ ժամանակակից արվեստով՝ հատկապես Էլիբեկյան ընտանիքի նկարիչների արվեստով: Ունեմ մի շարք գրքեր, ալբոմներ, կատալոգներ և հոդվածներ՝ նվիրված Հենրի Էլիբեկյանին, Ռոբերտ Էլիբեկյանին, նրանց հորը՝ հին Թիֆլիսի պատկերը մանրապատումներում վերակենդանացնող Վաղարշակ Էլիբեկյանին, Փարավոն Միրզոյանին, Վրույր Գալստյանին, Արկոյին, հայկական թատերական գեղանկարիչներին, հայոց ցեղասպանության արտացոլմանը կոթողային արվեստում, քանդակագործ Գևորգ Թադևոսյանին և այլն[1]:

[1] Տե՛ս Վրույր Գալստյան. «Սովետական արվեստ». Երևան, 1974, № 9: Նկարիչը և թատրոնը, «Գարուն». Երևան, 1979, № 8: Театральные художники Армении, «Театр». Москва, 1979, №10. Генрих и Роберт Элибекяны. Советские художники театра и кино. Ежегодник 1977/78. Москва 1980; Художник и театр. Генрих Элибекян. Вступительная статья. Каталог. Тбилиси 1981; Восток и Запад в творчестве Элибекянов, Межреспубликанская научная конференция по проблемам грузинско-армянских культурных взаимосвязей. Тбилиси, 1989; Вагаршак Элибекян. Альбом. Москва, «Изобразительное искусство», 1991. Составление; Tage der Sovijetunion in der Bundesrepublik Deutschland. Malerei der Familie Elibekian. Armenien, 1991; Геноцид армян в искусстве. Монументальное искусство, Армянский вопрос. Энциклопедия. Ереван, 1991 (նաև հայերեն); Arko, Allgemeines Kunsterlexikon. Munchen-Leipzig, 1992. B.5; Վաղարշակ Էլիբեկյան. Հին քաղաքի հարությունը. Երևան, 1990 (հայերեն և ռուսերեն): Փարավոն Միրզոյան. Գիրք-ալբոմ (Ներածական հոդվածը հայերեն, ռուսերեն, անգլերեն). Երևան, 1995: Հենրի Էլիբեկյան. Կոնցեպտուալիզմ. Ակցիա. Պերֆորմանս. Գիրք-ալբոմ. «Богатство граней», Երևան, 2004: Հենրի Էլիբեկյան. Երևան, 2006, հայերեն և ռուսերեն, խմբ., կազմ. և նախաբան: Էլիբեկյան Ռոբերտ. Երևան, 2014, 4 հոդվածների հեղինակ (գիրքը հրատարակվել է նաև անգլերեն): Мои современники. My contemporaries. Ереван, 2013. Предисловие на русском и английском языках и альбом из 22 репродукций работ Г. Элибекяна. Автор текста – Сейрануш Манукян. Два поколения. Two generations. Ереван, 2013. Предисловие на русском и английском языках и альбом из 50 репродукций работ Генриха и Вагаршака (младшего) Элибекянов. Автор текста – Сейрануш Манукян և այլն:

Երևանում աշխատելու առաջին տարիներին գրել եմ (հավաքագրել եմ, ուսումնասիրել եմ) 300-ից ավելի հոդված Հայաստանի, այդ թվում նաև Երևանի հուշարձանների մասին Համահավաքի համար, որը դեռևս չի տպվել:

Սակայն իմ հետաքրքրությունների հիմնական ոլորտը հայկական միջնադարյան արվեստն է, նրա կապերը արևմտաեվրոպական և արևելաեվրոպական արվեստների հետ: Այդ հարցերին նվիրված ունեմ ձեռագրարվեստին և որմնանկարչությանը նվիրված ավելի քան 100 ուսումնասիրություն: Դրանցից ամենակարևորը համարում եմ Վիգեն Ղազարյանի հետ գրված «Матенадаран. Армянская рукописная книга 6-14 вв.» (Մոսկվա, 1991) աշխատությունը (տպագրվել է Գերմանիայում), որում ամփոփված է 33 մամուլ կազմող 6-14-րդ դդ. հայ մանրանկարչությանը՝ նրա պատկերազարդման համակարգին, դպրոցներին, ոճական զարգացման ուղիներին նվիրված մենագրական հետազոտությունը: Հատորում ընդգրկված է նաև մի քանի տասնյակ պատկերազարդ ձեռագրերի կատալոգը՝ յուրաքանչյուր ձեռագրին նվիրված գրականության ցանկով, 402 ընտիր վերատպություններով, ինչը հազվագյուտ էր այդ ժամանակի համար: Գիրքն արժանացավ ԱՊՀ լավագույն գրքի մրցանակաբաշխության երկրորդ մրցանակին: Ի դեպ՝ քաղաքական նկատառումներով առաջին մրցանակը տրվեց Սոլժենիցինի եռահատորյակին: Այդ գրքի հետ կապված՝ Վիգեն Ղազարյանի հետ համատեղ ունենք պատկերազարդ հայկական ձեռագրերին նվիրված մի շարք հոդվածներ և զեկույցներ:

Կարևոր գրքերի թվին կարելի է դասել նաև «Գրիգոր Նարեկացին հայ ձեռագրական արվեստում» ալբոմ-մենագրությունը՝ գրված արվեստագիտության թեկնածու Դավիթ Ղազարյանի հետ (Գրիգոր Նարեկացին հայ ձեռագրական արվեստում, «Մատենադարան», Երևան, «Նաիրի», 2016, 119 էջ, տեքստ + 160 պատկեր), Էջմիածնի գեղարվեստական հավաքածուների ցուցահանդեսներին (Մոսկվա, Պետերբուրգ, Հելսինկի) նվիրված գիրք-կատալոգները՝ գրված Իվետա Մկրտչյանի հետ համատեղ[2], Բոխումում հայ արվեստի ցուցահանդեսի կատալոգը[3], ռումինահայերի սրբանկարչությանը նվիրված հետազոտությունները[4] և այլն:

---

[2] Манукян С., Мкртчян И. Сокровища Армянской церкви. Выставка в Гос. Музее Московского Кремля. Каталог. Вступительная статья и описания. Св. Эчмиадзин - Москва, 1997, 147 с., 107 илл., 79 описаний. (На русском, армянском и английских языках); Manukian S., Mkrtchian I. The Holy Cross. Treasures of the Armenian Church. Catalogue of the Exhibition. Text of Introduction and Descriptions. Helsinki, 1998; Манукян С., Мкртчян И. Сокровища Армянской церкви из собрания св. Эчмиадзина. Каталог выставки в Эрмитаже. Санкт-Петербург 2000. Вступительная статья и описания.

[3] Der Codex als ein Kunstlerisches Ganzes. // Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft. Museum Bochum 1995); Свет Премудрости. Армянская миниатюра. Книга-Календарь 2011. Бергамо, La Casa di Matriona, 2010 (на русском, итальянском, французском и немецком языках). Составление, вступительная статья и 12 статей-аннотаций. 24 цветных больших иллюстрации и 100 малых чернобелых. 36 с.

[4] L'Art des Icones des Armeniens de la Roumanie//Revue des Etudes Sud-Est Europeennes, LVIII, 1-4, Bucarest, 2020. p. 165-189 + պատկերներ; The Romanian-Armenian Art of Jcon Pain-

Վերջին շրջանի կարևոր հրապարակումներից նշեմ 2023 թվականին «Memories of Yerevan» գրքում հրատարակված իմ «Yerevan - A Trove of National Treasures: Manuscript art; Frescoes or "Divine treasures"; Sculpture. Tetrahedral memorials. Khachkars» ծավալուն հոդվածը[5]: Այս գրքում միավորված են հայ ականավոր գիտնականների արտակարգ գիտական տեքստերը Երևանի, նրա անցյալի և ներկայի մասին, ուր իմ ընդարձակ հոդվածը՝ մեծաթիվ պատկերներով, ներկայացնելով հայ արվեստի գանձերը երևանյան թանգարաններում (Մատենադարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, Հայաստանի պատմության թանգարան), լիարժեք վերստեղծեց մեր միջնադարյան արվեստի պատմությունը, այդ թվում և խաչքարի:

Մեծ արձագանք ունեցավ և «Русское искусство. Россия – Армения. Диалог на языке искусства» բացառիկ համարում տպագրված իմ «Иконография «Успения Богоматери» в средневековом искусстве Армении и Руси» հոդվածը[6] (այդ համարը նվիրված էր մեր արվեստին, և հոդվածները գրել էին մեր ինստիտուտի գիտաշխատողները). այստեղ զուգահեռաբար դիտարկված է Ռուսիայում և Հայաստանում Տիրամոր նինջի հրեա Սոֆոնիայի հետ պատկերագրական տարբերակը: Այս հոդվածից հետո ես ստացա տարբեր երկրներից առաջարկներ գրել նման դիտանկյունից այլ թեմաներով հոդվածներ:

Իմ գիտական գործունեության ողջ ընթացքում կարմիր թելով անցնող թեման Տաթևի որմնանկարներն են, որոնք ուսումնասիրել եմ 1967 թվականից մինչ օրս, տպագրել մի շարք հոդվածներ[7]: Ցավոք, մինչ օրս չի հրատարակվել

---

ting // Armenian Threasures in Romania, Bucharest, "Zamka", 2020; The Image of Gregory the Illuminator in Romanian-Armenian Icon Painting, Vestnik Sankt-Peterburgskogo Universiteta, Iskusstvovedenie, № 4, 2024, p. 488-503 (Շողակաթ Դևրիկյանի հետ համատեղ) և այլն:

[5] Yerevan - A Trove of National Treasures: Manuscript art; Frescoes or "Divine treasures"; Sculpture. Tetrahedral memorials. Khachkars. // Memories of Yerevan, Ed.by Nicolas V. Iljine, Artguide Editions, Prague, Czech Republic, 2023, pp. 254-309.

[6] Иконография «Успения Богоматери» в средневековом искусстве Армении и Руси // Русское искусство. Россия – Армения. Диалог на языке искусства. III/2021, с. 26-31

[7] Տե՛ս Армянская живопись X века, II республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов. Ереван, 1976; Армянские фрески X века в общехристианской системе храмовой росписи, III республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов. Ереван, 1977; О тенденции архаизации в армянской живописи X века, Научные сообщения. Гос. Музей народов Востока. Выпуск X. Москва, 1978, с. 38-47; Сложение системы росписей армянского храма II Международный симпозиум по армянскому искусству, Сборник докладов, Том III. Ереван, 1978; О фресках Татевского монастыря, IV республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов. Ереван, 1979; О сцене Омовения младенца, «Հայկական արվեստ», № 2. Երևան, ՀՀ ԳԱ, 1984; Տաթևի վանք, «Քրիստոնյա Հայաստան». Հանրագիտարան. Երևան, 2002 (Մ. Հասրաթյանի հետ համատեղ, մեր կողմից գրված է որմնանկարների հատվածը); Տաթեւի որմնանկարները (930 թ.) եւ արեւմտաքրիստոնէական վաղմիջնադարեան արուեստը, «Բազմավէպ», 2006, 1-4; Манукян Сейрануш. Фрески Татева (930 г.) // Անտառ Ծննդոց.

դրանց նվիրված իմ եռալեզու մենագրությունը: Հիմնական խոչընդոտն է այն, որ ես, ինչպես հայտնում է և մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը, գտնում եմ, որ որմնանկարները կատարել են ֆրանկ նկարիչները, իմ կարծիքով՝ Իտալիայից: Ունեմ այդ որմնանկարների մի շարք եզակի գունավոր լուսանկարներ՝ արված 1975 թ.՝ որմնանկարների մասնակի պահպանական վերականգնումից առաջ և հետո: Մեծագույն ցավով պետք է ասեմ, որ դեռևս 1990-ականներից սկսված և մինչ օրս ընթացող տաճարի և շրջակայքի վերականգնողական աշխատանքների պատճառով որմնանկարները, փաստորեն, **ոչնչացվել** են: Դա հանցագործություն է, աղետ է քրիստոնեական արվեստի պատմության, միջնադարագիտության համար, քանզի 10-րդ դ. որմնանկարներ գրեթե չեն պահպանվել: Տաթևը դրա եզակի օրինակներից էր:

Համալսարանն ավարտելուց հետո, այսինքն՝ իմ գիտական աշխատանքի հենց սկզբից, ես ուսումնասիրել եմ հայկական որմնանկարները, շրջել եմ Հայաստանով, ուսումնասիրել եմ դրանք տեղում, և Լիդիա Դուռնովոյի դոկումենտալ պատճեներով այդ աշխատանքն իր որոշակի ամփոփումը ստացավ երկու կարևոր հրապարակումներում՝ 19 տարի տարբերությամբ. «Fresco Decoration on Armenian Churches» զեկուցմանս մեջ, որը ներկայացրեցի Հայ արվեստին նվիրված միջազգային 2-րդ սիմպոզիումում՝ 1978 թվականին, և «Հայկական որմնանկարչություն» ծավալուն հոդվածումս, որը լույս տեսավ 2019 թվականին՝ Կարեն Մաթևոսյանի խմբագրությամբ հրատարակված «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածուում: Դրանցում առաջին անգամ ուսումնասիրվեց և վերստեղծվեց հայկական եկեղեցիների որմնանկարներով պատկերազարդման համակարգը և ներկայացվեց հայկական որմնանկարների զարգացման ընթացքը, դրանց ստեղծման գաղափարական աստվածաբանական հիմնավորումները: Պատկերահարգությունը հիմնավորվում էր իբրև «հիշողություն աստվածային գանձերի մասին»:

Իմ կատարած մեծագույն հետազոտությունը, որը դարձավ իմ ատենախոսությունը[8]՝ հայկական ավետարանների տեքստաբաժանումներին նվիրված աշխատությունն է, այն ես հիմա պատրաստում եմ տպագրության:

Դրանում ընդգրկված են մոտ 100 պատկերազարդ հայկական ավետարաններ, որոնց օրինակով բացահայտվում է ռուբրիկացիայի դերը պատկերազարդման մեջ, այն է՝ ընթերցվածների սկզբի ձևավորումները (լուսանցապատկերները և գլխատառերը), ավետարանական տիտղոսաթերթերի (անվանաթերթերի) ձևավորումն ու զարգացումը, տեքստաբաժանումների համարակալումների համակարգը և զարդանախշի դերն այդ համակարգում: Այդ թեմայով

Հոդվածների ժողովածու, նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին. Երևան, ԵՊՀ հրատ., 2015); Tatev Monastery Freskoes. Armenia, 930 // 23rd International Congress of Byzantine Studies, Belgrad, 22-27 August, 2016.

[8] Рубрикация в системе художественного оформления армянских рукописных Евангелий, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата искусствоведения, Ереван 2008, 30 с.

ունեմ բազում հոդվածներ և զեկույցներ[9], այդ թվում՝ ՄԳՇ հանդեսներում:

Կարևոր եմ համարում հիշատակել, որ ատենախոսությանս պաշտոնական ընդդիմախոսն էր Օլգա Պոպովան՝ բյուզանդական արվեստի ամենանշանավոր մասնագետներից մեկը, որին ես իմ Ուսուցիչն եմ համարում: Եվ նա գնահատեց իմ աշխատանքը որպես բացառիկ ինքնուրույն հետազոտություն: Հպարտ եմ դրանով:

Մի շարք զեկույցներ և հոդվածներ էլ նվիրված են կիլիկյան ձեռագրարվեստին, նրա գեղարվեստական կապերին: Դրանում օրգանապես, յուրօրինակ, հրաշալի կերպով միաձուլվել են մինչկիլիկյան Մեծ Հայքի մանրանկարչության ավանդույթները՝ բյուզանդական, արևմտյան և հեռավոր արևելյան արվեստի տարրերի հետ: Կիլիկյան պատկերազարդ գիրքը դիտարկում եմ որպես գեղարվեստական ամբողջություն, եզակի երևույթ քրիստոնեական գրքարվես-

[9] Рубрикация в художественной системе армянских рукописных Евангелий // VII республиканская научная конференция по армянскому искусству. Тезисы докладов. Ереван, 1995; Принципы художественного оформления армянских рукописных Евангелий // Тезисы докладов научной конференции памяти Рубена Дрампяна. Ереван, 1996; The artistic Sistem of the Armenian Manuscript Gospels // International Conference “Armenian Art and Architecture”, dedicated to S. Der-Nersessian’s 100th birth anniversary. Theses of Reports. Yerevan, 1996; О рубрикации в армянских рукописях // ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողով. Երևան, 2004; Ռուբրիկավորման դերը հայկական ձեռագիր Ավետարանների դեկորատիվ համակարգում, «Էջմիածին», 2005, ԺԲ, էջ 56-66, պտկ. 1-12; Орнамент в рубрикации армянских рукописных Евангелий // Հայ արվեստի հարցեր. ժողովածու 1. Երևան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հրատարակչություն, 2006, էջ 368-373, նկ. 40-49; Орнамент в рубрикации армянских рукописных Евангелий // Византийский временник. 65 (90). Москва, 2006, с. 243-247, рис. 1-10; Рубрикация как отражение литургии в декоративной системе армянских рукописных Евангелий // Армянский гуманитарный вестник 2/3-1. Москва/Ереван, 2009, с. 146-155; Роль рубрикации в декоративной системе армянских Евангелий. Хризограф. Выпуск 3. Москва, «Сканрус», 2009, с. 443-455; Образ Иерусалимского храма на полях армянских рукописных Евангелий // Հայ արվեստի հարցեր 4. Երևան, 2012, էջ 221-232; Functional and Artistic Features of the Byzantine and Armenian Illuminated Manuscript Gospels (Similarities and Differences) // Proceedings of the 22nd International Congress of Byzantine Studies. Sofia 22-27 August 2011, Vol. 3, Sofia 2011; Անվանաթերթերը Մոմիկի ծաղկած ձեռագրերում // Մոմիկ 750. Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750-ամյակին. Զեկուցումների ժողովածու. Երևան, 2011, էջ 49-58, 13 նկար; Образ Иерусалимского Храма на полях армянских рукописных Евангелий // Лазаревские чтения. Искусство Византии, Древней Руси, Западной Европы. 4(XXXXV). Материалы научной конференции, 2011. Москва, изд. МГУ, 2012, с. 88-96 с илл., цв. I-10-11; Le Rôle de la Rubrication dans le Systéme décoratif des Évangiles Arméniens // Revue des Études Arméniennes, tome 38, Peeters, 2018-2019, p. 85-101 (fig. 1-8, p. 97-101); Орнамент в системе иллюминирования армянских рукописных Евангелий // Studia Religiosa Rossica: научный журнал о религии, 2023, № 3, с. 86-108 և այլն):

տում[10]: Կիլիկյան գրքարվեստին նվիրված ունեմ նաև դասախոսություն համացանցում՝ զետեղված Մոսկվայի Հայկական թանգարանի կողմից[11]:

Իմ աշխատանքում մի առանձին մաս են կազմում հանրագիտարանային հոդվածները, որոնք ես սիրում եմ գրել, քանզի դրանք իրենց կարճությամբ և պարզ հստակ բնույթով հարազատ են իմ գրելաոճին[12]: Դրանցից հատկապես կարևոր են «Искусство рукописной книги» հոդվածը «Православная энциклопедия»-ում և «Ձեռագիր մատյան» հոդվածը «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում:

Եվս մի առանձին խումբ են կազմում հայ գաղթօջախների, մասնավորապես, ռումինահայ արվեստին նվիրված հետազոտությունները[13]: Այս հոդվածնե-

---

[10] Այս թեմային են վերաբերվում իմ հոդվածները՝ Der Codex als ein Kunstlerisches Ganzes // Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft. Museum Bochum 1995, S. 219-222; L'art du livre en Cilicie et les Traditions byzantines // L'Armenie et Byzance. Histoire et culture. (Ouvrage). Paris, Publications de la Sorbonne, 1996, p. 127-134, P1.1-6, Fig. 1-12; Рукописная книга Киликии как целостный художественный организм // Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները. Ձեկոյցների ժողովածու. Երևան, 2004, էջ 491-497; Киликийские заглавные листы в свете бифункциональности армянских рукописных Евангелий. Հայ արվեստի հարցեր 3. գիտական հոդվածների ժողովածու. Երևան, «Գիտություն» հրատ., 2010, էջ 211-219, 10 նկար; Киликийская миниатюра и традиции византийского искусства XI века: образец или импульс к творчеству // Искусство византийского мира. Индивидуальность в художественном творчестве. Сборник статей в честь Ольги Сигизмундовны Поповой. Москва, Государственный институт искусствознания, 2021, с. 248-273 с илл. 668 с.; Cilician Miniature and Byzantine Traditions of the 11th Century //24th International Congress of Byzantine Studies Venice and Padua 22-27 August 2022, Edizioni Ca Foscari. Abstracts of the Free Communications. Thematic Sessions Round Tables_and Posters Proceedings.

[11] https://www.armmuseum.ru/news-blog/lecture-armenian-illuminated-manuscripts-cilicia; https://www.youtube.com/watch?v=nKJT_QxTKME&t=1276s

[12] Arko // Allgemeines Kunsterlexikon. Munchen-Leipzig 1992. B.5; Avetis // Allgemeines Kunsterlexikon. Munchen-Leipzig 1992. B.6; Армения. Искусство рукописной книги // Православная энциклопедия, т. III. Москва, 2001, с. 301-306; Ավետիս, Ավետիք // Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան. Երևան, 2002, էջ 131-132; Ձեռագիր մատյան // Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան. Երևան, 2002, էջ 648-651; Սարգիս Պիծակ // Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան. Երևան, 2002, էջ 897-898; Տաթևի վանք. Որմնանկարները // Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան. Երևան, 2002, էջ 997-998; Ахпатское Евангелие // Православная энциклопедия, т. 4, Москва, 2002, с. 214-215; Григор Нарекаци. Иконография // Православная энциклопедия. т. 13. Москва, 2006, с. 101-102; Католикоса Евангелие // Православная Энциклопедия, т. XXXVIII, Москва, 1913, с. 48-49; С.С. Манукян, Л.С. Туманян, М.Э.С. Ширинян, Мушский Гомилиарий // Православная энциклопедия, т. XLVIII, М., 2017, с. 100-102; Ованнес Аркаехбайр // Православная энциклопедия, т. LII, 2018, с. 350-351:

[13] Այդ թվում՝ Слуцкие пояса из коллекций Первопрестольного св. Эчмиадзина, Материалы Международной научной конференции «Художественная культура армянских общин на землях Речи Посполитой», Минск, 2012, с английскими обширными резюме.

րում առաջին անգամ քննության են ենթարկվում ռումինահայ սրբապատկերները և ռումինահայ Զամկա վանքի որմնանկարները, դրանց թեմաները, ոճական առանձնահատկությունները, կապը ռումինական արվեստի հետ, պատկերագրությունը, հեղինակները: Զամկայի որմնանկարներում պահպանվել է հայ արվեստում «Ակաթիստոսի»՝ Տիրամորը ձոն հանդիսացող բյուզանդական հիմնի, միակ պատկերազարդումը:

**Աննա Ասատրյան** – Հարգելի տիկին Մանուկյան, 1973 թվականի մարտի 1-ից՝ ավելի քան կես դար, Դուք աշխատում եք ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում: Այստեղ են գրվել Ձեր գիտական ուսումնասիրությունները, այստեղ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի 2008 թվականի հուլիսի 21-ի նիստում պաշտպանեցիք Ձեր թեկնածուական արժեքավոր ատենախոսությունը՝ «Տեքստաբաժանումները /ռուբրիկացիան/ հայկական ձեռագիր Ավետարանների գեղարվեստական ձևավորման համակարգում» թեմայով, և Ձեզ շնորհվեց արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նույն խորհրդում Ձեր գիտական ղեկավարությամբ հետագայում իրենց թեկնածուական ատենախոսությունները հաջողությամբ պաշտպանեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Մատենադարանի և Երևանի պետական համալսարանի հայցորդներն ու ասպիրանտները, այդ թվում՝ Սաթենիկ Վարդանյանը (2012), Գայանե Առաքելյանը (2014), Սաթենիկ Չուգասզյանը (2014), Արփինե Սիմոնյանը (2020): Ներկայումս Ձեր գիտական ղեկավարությամբ իր ասպիրանտական ուսումնառությունն է անցում խոստումնալից ու հեռանկարային երիտասարդ հետազոտող, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ Շողակաթ Դևրիկյանը:

Ուստի խնդրում եմ ձևակերպեք **ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դերն ու նշանակությունը Ձեր կյանքում:**

**Սեյրանուշ Մանուկյան** – Ինչպես նշվեց՝ 51 տարի է, ինչ ես աշխատում եմ

---

Минск, Арт Дизайн, 2013, с. 206-210, илл.; Gospel No. 9510 donated to the Armenian Institute of Ancient Manuscripts (“Matenadaran”) by the Armenians of Romania, International Conference on Romanian-Armenian Cultural Heritage. Bucharest, 29 October-2 November 2013. Paper Abstracts, p. 36-37; Սրբապատկերը ռումինահայոց մեջ, Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջան. Նստաշրջանի նյութեր. Երևան, «Գիտություն», 2015, էջ 33-45, պտկ.; The Romanian-Armenians Art of Icon Painting, Hidden Treasures Unearthed: Armenian Arts and Culture of Eastern Europe. November 16-18, 2018. UCLA, Roys Hall 314. p. 21-22; Մատենադարանի ռումինահայերի նվիրած № 9510 Ավետարանը, «Պատմություն և մշակույթ», 2019, № 1, էջ 119-125, 33 պտկ., էջ 126-130; L’Art des Icones des Armeniens de la Roumanie, «Revue des Etudes Sud-Est Europeennes», LVIII, 1-4, Bucarest, 2020, pp. 165-189; Фрески армянского монастыря Замка в Румынии. Series Byzantina. Studies on Byzantine and Post-Byzantine Art, Vol. XIX, University of Ostrava, Polish Institute of world art studies, Cardinal Stefan Wyscynski university. Ostrava–Warsaw 2021, pp. 19-45. 22 ill.; Фрески армянского монастыря Замка в Румынии, Библейские и литургические темы и образы в искусстве востока и запада: от слова к образу. Коллективная монография. М., РГГУ, 2022, с. 89-105:

այս ինստիտուտում և պարզ է որ իմ ողջ գիտական գործունեությունը կապված է եղել ինստիտուտի հետ: Նաև պետք է ասեմ, որ դրան միացել է իմ դասախոսական և գիտական գործունեությունը ԵՊՀ-ում: Ինստիտուտն ու ԵՊՀ-ն եմ ներկայացրել վերջին տարիների միջազգային գիտաժողովներում՝ Փարիզում, Սոֆիայում, Վենետիկում, Բելգրադում, Բուխարեստում, Լոս Անջելեսում, Պետերբուրգում, Մոսկվայում, Մինսկում և այլուր:

**Աննա Ասատրյան** – Երկար տարիներ Դուք զբաղվում եք մանկավարժական գործունեությամբ՝ Երևանի պետական համալսարանում: Ի՞նչ կասեք այդ կապակցությամբ:

**Սեյրանուշ Մանուկյան** – Իմ ղեկավարությամբ պաշտպանվել են 6 ատենախոսություններ, ավելի քան 200 դիպլոմային և մագիստրոսական թեզեր: Շատ սիրում եմ դասախոսի իմ աշխատանքը, գոհունակություն եմ ստանում այն հանգամանքից, որ իմ ուսանողները հաղորդակից են դառնում համաշխարհային արվեստի պատմությանը, սկսում են հասկանալ արվեստը, գեղեցիկը: Երկար ժամանակ ես դասավանդել եմ արվեստագիտության հիմունքները, սակայն հիմա դասավանդում եմ բացառապես միջնադարյան արվեստին վերաբերող դասընթացները՝ միջնադարյան պատկերագրությունը, բյուզանդական արվեստը, արևմտաեվրոպական միջնադարյան արվեստը և Աստվածաշնչի պատկերագրությունը: Փորձում եմ փոխանցել իմ ուսանողներին միջնադարյան արվեստի ոգեղենության զգացումը: Ուսանողների, դիպլոմնիկների հետ աշխատանքին ես նվիրում եմ իմ ժամանակի մեծ մասը: Եվ ինձ թվում է՝ ուսանողները դա զգում ու գնահատում են:

**Աննա Ասատրյան** – Ձեր մաղթանքը երիտասարդ արվեստաբաններին:

**Սեյրանուշ Մանուկյան** – Սիրել իրենց գործը, հնարավորինս շատ գիտելիք ստանալ և փորձել դառնալ միջնորդ արվեստ ընկալողի և արվեստի միջև: Նաև՝ խորապես ուսումնասիրել հայ արվեստը համաշխարհայինի համատեքստում, քանզի մեր հարուստ արվեստը դեռևս շատ մակերեսային, ոչ բավարար է ուսումնասիրված, հայ արվեստի պատմությունը շատ բացեր ունի: